ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հաճախ տրվող հարցեր նոր կորոնավիրուսի և արտակարգ դրության պայմաններում մարդու իրավունքների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հաճախ տրվող հարցեր նոր կորոնավիրուսի և արտակարգ դրության պայմաններում մարդու իրավունքների վերաբերյալ

(2020 թվականի մարտի 27-ի դրությամբ)

Նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19)[1] տարածման կանխարգելմամբ պայմանավորված արտակարգ իրադրությունը պահանջում է մարդկանց՝ իրենց իրավունքների և կիրառվող սահմանափակումների վերաբերյալ իրազեկվածության բարձր մակարդակ: Հաշվի առնելով հանրությանը հետաքրքրող հարցերը՝ մշակվել է դրանց պատասխանները պարունակող սույն ձեռնարկը:

1. Ի՞նչ է Կորոնավիրուսը

Կորոնավիրուսն առաջացել է 2019 թվականին և նախկինում մարդկանց մոտ չի հայտնաբերվել: Կորոնավիրուսը կարող է առաջացնել ինչպես թեթև (սուր շնչառական վարակ, հարբուխ), այնպես էլ ծանր ընթացքով հիվանդություններ:

Մարդկանց շրջանում վիրուսը տարածվում է արդեն վարակված հիվանդի հետ սերտորեն շփվելու արդյունքում: Վիրուսն օդում մնում է մինչև 3 ժամ, ստվարաթղթի վրա՝ մինչև 24 ժամ, պղնձի վրա՝ մինչև 4 ժամ, իսկ պլաստիկի և չժանգոտվող մետաղի վրա՝ 2-3 օր:

Վարակված լինելու ախտանշաններն են՝ մարմնի ջերմաստիճանի բարձրացում/տենդ, հազ, կոկորդի ցավ, թուլություն, դժվարացած շնչառություն և այլն:

Վիրուսի ինկուբացիոն շրջանը 1-14 օր է: Մարդկանց մեծ մասը (մոտ 80%) ապաքինվում է հիվանդությունից՝ առանց հատուկ բուժման անհրաժեշտության:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի՝ 2020 թվականի մարտի 13-ի հայտարարությամբ Կորոնավիրուսը որակվել է որպես պանդեմիա:

Աշխարհում դեռևս Կորոնավիրուսը կանխելու կամ բուժելու պատվաստանյութ չկա:

2. Ինչպե՞ս պաշտպանվել Կորոնավիրուսից

Կորոնավիրուսից պաշտպանվելու համար անհրաժեշտ է՝

⇒ Օճառով և ջրով հաճախակի լվանալ ձեռքերը, մանավանդ՝ ուտելուց առաջ և դրանից հետո՝ առնվազն 20 վայրկյան տևողությամբ: Հազալիս և փռշտալիս բերանն ու քիթը փակել անձեռոցիկով, այնուհետև այն գցել աղբամանը.

⇒ Սովորական կենցաղային ախտահանիչով հաճախակի մաքրել և ախտահանել մակերեսները: Օրական առնվազն մեկ անգամ լոգարանի և սանհանգույցի մակերեսները մաքրելու ախտահանել փոշիացված սպիտակեցնող լուծույթ պարունակող սովորական կենցաղային ախտահանիչով: Հագուստ, անկողնային սպիտակեղեն, բաղնիքի և ձեռքի սրբիչներ և այլ պարագաներ օգտագործելուց հետո կանոնավոր լվանալ օճառով ու ջրով կամ մեքենայով՝ 60-90°C ջերմաստիճանում, սովորական լվացքի փոշիով, այնուհետև լավ չորացնել դրանք.

[1] Այսուհետ՝ Կորոնավիրուս:

⇒ Ախտանշաններ չունեցող անձանց համար բժշկական դիմակ չի պահանջվում: Դիմակն անհրաժեշտ է օգտագործել միայն կասկածելի անձի հետ շփվելիս՝ սնունդ սպասարկելիս, առաջնային բժշկական օգնություն ցուցաբերելիս, փակ տարածություններում: Դիմակ կրելու դեպքում այն պետք է փոխել 3-4 ժամը մեկ, հակառակ դեպքում այն վտանգավոր է դառնում.

⇒ Եթե վստահ եք, որ անձը վիրուսակիր է, պետք է պարտադիր կրել դիմակ, հագնել ձեռնոց և դնել աչքերը հերմետիկ փակող ակնոց, քանի որ վարակը կարող է փոխանցվել նաև աչքերի միջոցով.

⇒ Եթե հասարակական վայրերում (տրանսպորտ, խանութ և այլն) գտնվելն անխուսափելի է, ապա պետք է պահպանել սոցիալական հեռավորությունը՝ 1,5-2 մետր.

Վիրուսն օդում մնում է մինչև 3 ժամ, ստվարաթղթի վրա՝ մինչև 24 ժամ, պղնձի վրա՝ մինչև 4 ժամ, իսկ պլաստիկի և չժանգոտվող մետաղի վրա՝ 2-3 օր:

3. Որո՞նք են ռիսկային խմբերը

Առողջապահության համաշխարհային կազմակերպության հրապարակած տվյալների համաձայն՝ հիվանդության ծանր զարգացման ռիսկային խմբերն են՝

⇒ հղիներ.

⇒ 70 և բարձր տարիքային խմբի անձինք (անկախ առողջական վիճակից).

⇒ 70-ից ցածր տարիքային խմբի անձինք, որոնք համապատասխանում են ստորև թվարկված նկարագրին՝

- քրոնիկ (երկարաժամկետ) շնչառական հիվանդություններ ունեցողներ (ասթմա, թոքային քրոնիկ հիվանդություն (COPD), էմֆիզեմա կամ բրոնխիտ).
- սրտի քրոնիկ հիվանդություն ունեցողներ (սրտի անբավարարություն).
- երիկամների քրոնիկ հիվանդություն ունեցողներ.
- լյարդի քրոնիկ հիվանդություն ունեցողներ (հեպատիտ).
- քրոնիկ նյարդաբանական հիվանդություններ ունեցողներ (Պարկինսոնի հիվանդություն, բազմակի սկլերոզ (MS), ուղեղային կաթված).
- շաքարային դիաբետիկներ:

4. Ի՞նչ իրավական ռեժիմ է այս պահին գործում երկրում և ի՞նչ է այն ենթադրում

Կառավարության՝ մարտի 16-ի որոշմամբ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հայտարարվել է արտակարգ դրություն՝ Կորոնավիրուսի վարակի կանխարգելման և դրա հետագա տարածման դեմ պայքարի նպատակով: Արտակարգ դրության ընթացքում կարող են սահմանափակվել մարդու որոշ իրավունքներ և ազատություններ:

5. Ո՞ր իրավունքները չեն կարող սահմանափակվել

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված են իրավունքներ, որոնք բացարձակ բնույթ են կրում և չեն կարող սահմանափակվել արտակարգ դրության ժամանակ: Խոսքը վերաբերում է այդ իրավունքներից հետևյալ հիմնականներին՝

⇒ Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու իրավունքը,

⇒ դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը,

⇒ արդար դատաքննության իրավունքը, իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը և անմեղության կանխավարկածը,

⇒ դատապարտվածի բողոքարկման իրավունքը, ներման խնդրանքի իրավունքը,

⇒ մարդու արժանապատվությունը և կյանքի իրավունքը,

⇒ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը և խոշտանգման արգելքը,

⇒ օրենքի առջև ընդհանուր հավասարությունը,

⇒ ամուսնանալու ազատությունը,

⇒ երեխայի իրավունքները,

⇒ կրթության իրավունքը (բացառությամբ մրցութային հիմունքներով կրթության իրավունքը),

⇒ մտքի և կրոնի ազատությունը:

6. Ի՞նչ հիմնական սահմանափակումներ են գործում

Հաշվի առնելով համաճարակի տարածման եղանակները՝ սահմանափակումները հիմնականում կարող են վերաբերել մարդկանց շփումներին, ազատ տեղաշարժին, անձնական ազատությանը, որոշակի գործունեությամբ զբաղվելուն, իսկ պարտականությունները՝ սանիտարական և հակահամաճարակային կանոններին հետևելուն և այլն: Սահմանափակման միջոցներն են, օրինակ.

⇒ մեկուսացում,

⇒ ինքնամեկուսացում,

⇒ տեղաշարժման արգելք:

7. Ի՞նչ է կարանտինը

Կարանտինը, որպես կանոն, բնորոշվում է իբրև վարակիչ հիվանդությունների բռնկումները, համաճարակները տեղայնացնող, վերացնող, վարակի օջախները մեկուսացնող և վարակի հետագա տարածումը, վարակիչ հիվանդությունների ներթափանցումը կանխող, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ժամանակավոր սահմանափակումներ ու լրացուցիչ պարտականություններ սահմանող կանխարգելիչ և

հակահամաճարակային միջոցառումների համակարգ է: Կարանտինային միջոցառումները կարող են կիրառվել որոշակի ժամանակահատվածով:

8. Ի՞նչ է մեկուսացումը

Մեկուսացումը հիվանդի կամ վարակվածի, ինչպես նաև վարակիչ հիվանդի հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումն է դրա համար նախատեսված տարածքում՝ այլ անձանց հետ շփումը բացառելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:

9. Ի՞նչ է ինքնամեկուսացումը

Ինքնամեկուսացումը հիվանդի կամ հիվանդի հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումն է իր մշտական բնակության կամ իր նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:

10. Որո՞նք են մեկուսացման և ինքնամեկուսացման տարբերությունները

Մեկուսացումն ու ինքնամեկուսացումը տարբերվում են անձի գտնվելու վայրով: Հաջորդ տարբերությունը դրանց կիրառման պատճառն է: Մեկուսացումը կիրառվում է միայն այն դեպքում, երբ անձն արդեն վարակված է Կորոնավիրուսով կամ շփվել է դրանով վարակված անձի հետ: Ինքնամեկուսացումը, բացի վարակված կամ նրա հետ շփված անձանցից, պահանջվում է կիրառել նաև այն դեպքերում, երբ, օրինակ՝ մարդը նոր է վերադարձել Կորոնավիրուսի տարածման տեսանկյունից ռիսկային գոտում գտնվող երկրներից:

11. Կարո՞ղ եմ ազատ տեղաշարժվել երկրի ներսում

Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում սահմանափակված է մարդկանց ազատ տեղաշարժվելու իրավունքը և նախատեսված է մշտական բնակության կամ այլ վայրում պարտադիր ինքնամեկուսացման ընդհանուր պահանջ:

Այս պահանջը չի վերաբերում՝

⇒ Պարետի որոշմամբ թույլատրված սուբյեկտների (օրինակ՝ կազմակերպությունների) աշխատակիցներին.[2]

⇒ Այն անձանց, ովքեր ունեն աշխատավայրում գտնվելու իրավունք.[3]

---

[2] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ» Պարետի 2020 թվականի մարտի 24-ի N 14 որոշումը՝ https://www.gov.am/files/docs/3967.pdf:
Տե՛ս նաև «Պարետի 2020 թվականի մարտի 24-ի N 14 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Պարետի 2020 թվականի մարտի 25-ի N 17 որոշումը՝ https://www.gov.am/files/docs/3973.pdf:

⇒ Այցելություններ առևտրի կենտրոններ, սպառողական ապրանքների շուկաներ, գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ, կենդանիների շուկաներ, տոնավաճառներ (վերնիսաժները) և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրեր և վերջիններից դուրս գործող՝ պարենային ապրանքների վաճառք իրականացնող առևտրի օբյեկտներ, դեղատներ, գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ, հիվանդանոցներ ու բժշկական այլ հաստատություններ, ինչպես նաև խնամքի կարիք ունեցող անձանց բնակության կամ կացության և հոգեհանգստի ու հուղարկավորության վայրեր.

⇒ բնակության վայրի մոտակայքում օրվա ընթացքում միայն մեկ անգամ ֆիզիկական վարժություններ կամ հեծանվավարություն իրականացնելու դեպքում:

12. Ո՞ր դեպքում է պահանջվում ունենալ տեղաշարժման թերթիկ

Յուրաքանչյուր դեպքում տանից դուրս գալիս տեղաշարժման թերթիկի (տե՛ս հավելվածը) և անձը հաստատող փաստաթղթի առկայությունը պարտադիր է:

13. Ի՞նչ տվյալներ են անհրաժեշտ լրացնել տեղաշարժման թերթիկում

Տեղաշարժման թերթիկում անհրաժեշտ է լրացնել հետևյալ տվյալները.

⇒ ամսաթիվ,

⇒ անուն, ազգանուն ու հայրանուն,

⇒ ելքի ժամը,

⇒ ելքի հասցեն,

⇒ այցելության վայրը,

⇒ այցելության նպատակը,

⇒ վերադարձի ակնկալվող ժամը,

⇒ ստորագրություն:

14. Ի՞նչ անեմ, եթե չունեմ տեղաշարժման թերթիկը տպելու հնարավորություն

Եթե չունեք տեղաշարժման թերթիկի՝ Կառավարության սահմանած ձևանմուշը տպելու հնարավորություն, այն կարող եք լրացնել ձեռագիր:

15. Քանի՞ անձ կարող է տեղափոխվել մեկ ավտոմեքենայով

Թույլատրվում է 8-ից ոչ ավելի նստատեղ ունեցող ավտոմեքենայում մինչև մեկ մեծահասակ ուղևորի փոխադրում:

---

[3] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հանրային ծառայության իրականացման նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ» Պարետի 2020 թվականի մարտի 24-ի N 15 որոշումը՝ https://www.gov.am/files/docs/3968.pdf:

16. Նախատեսվա՞ծ են բացառություններ ավտոմեքենայում մարդկանց քանակի վերաբերյալ

Երեխաների փոխադրման դեպքում նրանց քանակի սահմանափակում առկա չէ: Ինքնուրույն տեղաշարժման, տեսողության և լսողության սահմանափակումներ ունեցող անձանց փոխադրման դեպքում թույլատրվում է նաև տվյալ անձի ուղեկցողի (խնամողի) փոխադրումը:

17. Եթե ես ՀՀ քաղաքացի եմ, կարո՞ղ եմ մեկնել երկրից

ՀՀ պետական սահմանի ցամաքային անցման կետով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ելքն արգելված է: Այս արգելքը չի վերաբերում օդային ճանապարհով Հայաստանի Հանրապետությունից ելքին:

18. Եթե ես ՀՀ քաղաքացի եմ և գտնվում եմ արտերկրում, կարո՞ղ եմ վերադառնալ Հայաստան

ՀՀ քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետություն մուտք սահմանափակման ենթակա չէ:

19. Ովքե՞ր կարող են մուտք գործել Հայաստանի Հանրապետություն

Արտակարգ դրության պայմաններում Հայաստանի Հանրապետություն կարող են մուտք գործել՝

⇒ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները.

⇒ ՀՀ քաղաքացի չհանդիսացող նրանց ընտանիքի անդամները.

⇒ ՀՀ քաղաքացի չհանդիսացող, սակայն Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքով բնակվելու իրավունք ունեցող անձինք.

⇒ ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձինք՝ բացառությամբ համաճարակային լարված իրավիճակ ունեցող երկրների ցանկից մուտք գործողների կամ վերջին 14 օրվա ընթացքում այդ երկրներում գտնված անձանց.

⇒ Համաճարակային լարված իրավիճակ ունեցող երկրների (տարածքների) դիվանագիտական ներկայացուցիչները, հյուպատոսական հիմնարկների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները և նրանց ընտանիքի անդամները.

⇒ Առողջապահական, տնտեսական կամ արտադրական անհետաձգելի կարիքներով պայմանավորված և համապատասխան հիմնավորում ունեցող անձինք, հոգեհանգստի կամ թաղման արարողությանը մասնակցելու նպատակով՝ հանգուցյալի մերձավոր ազգականները՝ ծնողները, ամուսինը/կինը, երեխաները, քույրը և եղբայրը, ինչպես նաև ՀՀ-ում ՌԴ սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձինք և նրանց ընտանիքի անդամները՝ համատեղ բնակվող ծնողները և երեխաները, ամուսինը/կինը՝ բոլոր դեպքերում՝ սահմանապահ զորքերի հրամանատարի հատուկ թույլտվության առկայության դեպքում.

⇒ Ռուսաստանի Դաշնությունից, Իրանից կամ Վրաստանից բեռնափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցի վարորդը և փոխարինող մեկ վարորդ, ինչպես նաև բեռնափոխադրումներ իրականացնող օդանավերի մուտքը և ելքը՝ միայն նրանց անձնակազմերի մասով, եթե վերոնշյալ անձանց մոտ չեն հայտնաբերվել վարակի ախտանիշներ.

⇒ Բեռնափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցի վարորդի, ուղևորափոխադրում, բեռնափոխադրում, ռազմական կամ սանիտարական թռիչքներ իրականացնող օդանավերի անձնակազմը.

⇒ Պարետի որոշմամբ՝ այլ առանձնահատուկ դեպքերում:

20. Ու՞մ մուտքն է արգելված Հայաստանի Հանրապետություն

Արտակարգ դրության պայմաններում Հայաստանի Հանրապետություն չեն կարող մուտք գործել՝

⇒ ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձինք, ովքեր ժամանում են Ռուսաստանի Դաշնությունից կամ Վրաստանից.

⇒ ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետություն մուտք գործելուն նախորդող 14 օրվա ընթացքում գտնվել են համաճարակային լարված իրավիճակ ունեցող երկրներում (տարածքներում)[4].

⇒ ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետության տարածք են մուտք գործում համաճարակային լարված իրավիճակ ունեցող երկրներից (տարածքներից):

21. Ինչպե՞ս կարող եմ կազմակերպել իմ կրթությունը

Արտակարգ դրության ողջ ընթացքում ուսումնական հաստատություններում (օրինակ՝ դպրոցներ, ԲՈՒՀ-եր և այլն) առկա ուսուցմամբ գործընթացը դադարեցված է:

Հայաստանի կրթական հաստատություններում կիրառվում է հեռավար ուսուցման մեթոդը: Ստեղծվել են կրթական հարթակներ, որտեղ ուսանողները, աշակերտները և ուսուցիչներն ու դասախոսները կարող են կազմակերպել ուսուցումն առցանց (օնլայն) եղանակով:

22. Ի՞նչ միջոցառումներ են արգելված

Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում արգելված են 20 և ավելի անձանց մասնակցությամբ անցկացվող հետևյալ հանրային միջոցառումների կազմակերպումը, անցկացումը և այդ միջոցառումներին մասնակցությունը՝

⇒ համերգներ, ցուցահանդեսներ, ցուցադրություններ, թատերական ներկայացումներ և սպորտային, մշակութային, կրթական այլ միջոցառումներ.

---

[4] Տե՛ս համաճարակային լարված իրավիճակ ունեցող երկրների (տարածքների) ցանկը հետևյալ հղումով՝ https://covid19.gov.am/hy/travel_and_coronavirus:

⇒ ժամանցային միջոցառումներ.

⇒ տոնական և հիշատակի միջոցառումներ, այդ թվում՝ ծննդյան (տարեդարձի), հարսանյաց (նշանադրության), թաղման միջոցառումներ.

⇒ պարետի ցուցումով որպես հանրային միջոցառում որակված այլ միջոցառումներ:

23. Ի՞նչ սահմանափակումներ են գործում առանձին հաստատություններում

1) Քրեակատարողական հիմնարկներում և ձերբակալվածներին պահելու վայրերում արգելվում են՝

⇒ հանձնուքներ, ծանրոցներ և փաթեթներ ստանալը և ուղարկելը.

⇒ տեսակցություններ ունենալը (բացառությամբ տեսազանգից օգտվելու դեպքերի).

⇒ կրոնական ծեսերի կազմակերպումը և դրանց մասնակցելը:

2) Քրեակատարողական հիմնարկներում կարող են սահմանափակվել կամ արգելվել՝

⇒ զբոսանքները.

⇒ քրեակատարողական հիմնարկի տարածքի սահմաններում և դրանից դուրս գտնվելը (այդ թվում՝ կարճաժամկետ մեկնելը), տարածքի սահմաններում տեղաշարժվելը.

⇒ պարետի ցուցումով՝ այլ գործունեություն:

3) Տարեցներին սոցիալական ծառայություններ տրամադրող, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում և հոգեբուժական կազմակերպություններում արգելվում է՝

⇒ հանձնուքներ, ծանրոցներ և փաթեթներ ստանալը և ուղարկելը.

⇒ տեսակցություններ ունենալը (բացառությամբ տեսազանգից օգտվելու դեպքերի):

4) Զորամասերում արգելվում են՝

⇒ հանձնուքներ, ծանրոցներ և փաթեթներ ստանալը և ուղարկելը.

⇒ տեսակցություններ ունենալը (բացառությամբ տեսազանգից օգտվելու դեպքերի).

⇒ շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի պարտադիր զինծառայողների արձակուրդը.

⇒ պարետի ցուցումով՝ այլ գործունեություն:

24. Սոցիալական հեռավորության ի՞նչ կանոններ են սահմանված տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար, որտեղ հնարավոր է մարդկանց անմիջական շփում

Անձանց անմիջական ներկայության անխուսափելի անհրաժեշտության դեպքում՝ կազմակերպությունները պետք է պահպանեն հետևյալ կանոնները՝

- Բացառել մարդկանց կուտակումները, իսկ կուտակումներ առաջանալու հավանականության դեպքում ապահովել մարդկանց մուտքի գործընթացի

կառավարմանն ուղղված միջոցառումներ՝ սահմանափակելով մարդկանց մուտքը փակ տարածք՝ մինչև ներսում գտնվող մարդկանց որոշակի քանակի դուրս գալը.

- Առևտրի կետերի վճարման տաղավարների, իսկ անհրաժեշտության դեպքում նաև վաճառքի տաղավարների մոտ առնվազն իրարից մեկ մետր հեռավորությամբ իրականացնել գծանշում՝ հերթերը բացառելու և սոցիալական հեռավորությունն ապահովելու նպատակով:

25. Ո՞ր ժամերին կարող են կենսաթոշակառուները այցելել խանութներ

Առաջին անհրաժեշտության ապրանքներ վաճառող խանութները յուրաքանչյուր օր՝ ժամը 10:00-12:00-ը, սպասարկում են միայն կենսաթոշակառուներին: Նրանց սպասարկելուց առաջ պետք է ախտահանել խանութի սրահը:

26. Ի՞նչ ծավալով են բանկերն իրականացնում իրենց աշխատանքը

Բանկերն աշխատում են անհրաժեշտ նվազագույն ծավալով՝ կանխիկ դրամաշրջանառությունը ապահովելու և քաղաքացիների ու իրավաբանական անձանց անհետաձգելի կարիքները բավարարելու նպատակով:

27. Արտակարգ դրության պայմաններում իրականացվու՞մ են միջմարզային ուղևորափոխադրումներ

Արտակարգ դրության պայմաններում դադարեցվել է ավտոբուսներով և միկրոավտոբուսներով միջմարզային կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումները:

28. Արտակարգ դրության պայմաններում վճարումներ չկատարելու պատճառով արդյո՞ք կդադարեցվեն էլեկտրաէներգիայի, գազի և խմելու ջրի մատակարարումը

Մինչև հայտարարված արտակարգ դրության ավարտը մատակարար ընկերությունները չեն դադարեցնի քաղաքացիների էլեկտրական էներգիայի, բնական գազի և խմելու ջրի մատակարարումը: Մինչդեռ, վերը նշվածը չի ազատում բնակիչ-բաժանորդներին իրենց մատակարարված էլեկտրական էներգիայի, բնական գազի և խմելու ջրի դիմաց վճարման պարտավորության կատարումից:

29. Ինչպե՞ս ստանալ Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը արտակարգ դրության պայմաններում

Արտակարգ դրության ժամանակ կիրառվող սահմանափակումները չեն կարող խոչընդոտել Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը:

Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու իրավունքը կրում է բացարձակ բնույթ և արտակարգ դրության ընթացքում ենթակա չէ սահմանափակման:

Եթե կարծում եք, որ ձեր իրավունքները խախտվել են պետական, տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, ապա կարող եք դիմել Մարդու իրավունքների պաշտպանին:

Մարդու իրավունքների պաշտպանին կարող եք դիմել նամակ ուղարկելով ombuds@ombuds.am էլ. հասցեին կամ զանգահարելով 116 անվճար կամ +374 96 116100 թեժ գիծ շուրջօրյա հեռախոսահամարներին (ներառյալ՝ օգտվելով «Viber» և «WhatsApp» հավելվածներից): Պաշտպանին կարող եք դիմել նաև սոցիալական ցանցերում պաշտոնական էջերի միջոցով:

Օգտակար հեռախոսահամարներ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ
Թեժ գիծ՝ 116, +374 96 116100
Էլ. փոստ՝ ombuds@ombuds.am

Պարետատուն
Թեժ գիծ՝ 8141, արտերկրից զանգերի համար՝ +374 11 208141

Առողջապահության նախարարություն
ԱՆ օպերատիվ զանգերի կենտրոն՝ +374 60 838300
Էլ. փոստ՝ info@moh.am

Արտաքին գործերի նախարարություն
Հեռ.՝ +374 60 620000
Էլ. փոստ՝ info@mfa.am

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Թեժ գիծ՝ 114
Էլ. հասցե՝ info@mlsa.am

Հավելված

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՏԵՂԱՇԱՐԺՄԱՆ ԹԵՐԹԻԿ

_____ 2020

Անուն, ազգանուն, հայրանուն	
Ելքի ժամը	
Ելքի հասցե	
Այցելության վայրի հասցե և անվանում	
Այցելության նպատակը	
Վերադարձի ակնկալվող ժամը	

Ստորագրություն _____